**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՄՈՒՇ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2015 թվականի հոկտեմբերի 01-ին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության և Գյումրու քաղաքապետարանի միջև կնքված եռակողմ փոխըմբռնման հուշագրի 1.2.2-րդ կետի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել «Մուշ զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությանը 6.262.344 (վեց միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Մուշ-2 թաղամասում գործող մանկական կենտրոնի 2017 թվականի 1-ին եռամսյակի ծախսերը մասնակի փոխհատուցելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Ռ.ՍԱՆՈՅԱՆ

Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

Լ.ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝ Հ.Աբիսողոմյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՄՈՒՇ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Որոշման ընդունումը պայմանավորված է 2015 թվականի հոկտեմբերի 01-ին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության և Գյումրու համայնքապետարանի միջև կնքված եռակողմ փոխըմբռնման հուշագրի 1.2.2-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների կատարման անհրաժեշտությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՄՈՒՇ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում գործող մանկական կենտրոնի ծախսերի մասնակի փոխհատուցման համար «Մուշ» զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությանը դրամական միջոցներ հատկացնելու մասին» Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: